ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Սպանդարյան, , spandaryan.shirak@mta.gov.am 094303238

N 002

11 հունվարի 2017թ

Շիրակի մարզպետ

պարոն՝ Հ. Սիմոնյանին

Հարգելի՝ պարոն Սիմոնյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի ավագանու կողմից ընդունած

թիվ 50-Ա որոշումը :

առդիր 4 թերթ

Հարգանքով՝ Ավետիք Միսիթարյան

Շ. ԱՊԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 128-17
11. 01 17 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 50-Ա

«30» դեկտեմբերի 2016 թվական

գյուղ Սպանդարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28.1-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 117 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի գյուղական համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականությունը համարվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության,

գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.32431 հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 08-107-0016-0002, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29022016-08-0029, տրված՝ «29» փետրվարի 2016 թվական) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Սպանդարյանի համայնքում իրականացվող «Սպանդարյանի մանկապարտեզի կառուցում» ծրագրի շրջանակներում այդ հողամասում կառուցվող մանկապարտեզի շենքի նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյանի գյուղական համայնքի ղեկավար Ավետիք Մխիթարյանին՝

1) ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-6	*Դեմ-0*	*Ձեռնպահ-0*
Մինասյան Հովհաննես	*կողմ*	
Ալմասյան Սայաթ	*կողմ*	
Բաղդասարյան Արմեն՝	*կողմ*	
Ստեփանյան Հայրություն՝	*կողմ*	
Կուրղինյան Էդիկ	*կողմ*	
Խաչատրյան Գևորգ	*կողմ*	

Պողոսյան Պետյա բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ «30 » դեկտեմբեր 2016 թվական

գ. Ապանեցերյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ.
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ Մ 1 : 10000



Հողամասի

Հողամասերի բնութագրիչ համարներ	կոորդինատները		գծային չափեր (մ)
	x	y	
1	8417181.4248	4503601.2944	59.31
2	8417225.6736	4503640.7884	12.15
3	8417213.8791	4503643.7033	55.65
4	8417268.3136	4503632.1672	33.56
5	8417250.8806	4503603.4881	13.11
6	8417241.6053	4503594.2196	28.56
7	8417215.1738	4503583.3973	12.30
8	8417204.8572	4503576.7045	33.97
1	8417181.4248	4503601.2944	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՍԽԻԹԱՐՅԱՆ